«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Այվազյան

Ուսումնական հաստատություն՝ Կոտայքի մարզ, Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց

Երևան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է բնագիտական ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է կենսաբանության դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված

արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. ,...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևիցե: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից ,աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն էե: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը: Միասնական էր նաև արժեհամակարգը: Մեզ մնում էր միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ, որպես մանրադրամ, շուկա նետվեցին: Նորանկախ հանրապետության նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի

քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել:

Հանգուցային բառեր. դաստիարակություն, կրթություն, ազգային գիտակցություն, համամարդկային արժեքներ, դաստիարակչական համակարգ, ավանդական միջոցներ, տարիքային գործոն, միջանձնային հարաբերություններ, ուսուցիչ, դասղեկ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը աշակերտների մոտ կենսաբանության ժամին: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվածքը:

Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:

Պարզաբանել արժեքային համակարգի դերը կենսաբանության դասաժամերին:

Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

Հետազոտության օբյեկտը: Հետազոտության օբյեկտ է հանդիսանում կենսաբանություն առարկան:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ դիտարկում, թեստավորում, վերլուծություն և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Այսօր ողջ աշխարհում ձևավորվել է իրավիճակ, որը բնութագրվում է սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում արմատական փոփոխություններով: Գիտատեխնիկական հեղափոխությունը կարող է հանգեցնել սոցիալական լուրջ հետևանքների, եթե չուղեկցվի համապատասխան բարոյական զարգացմամբ. հասարակության մեջ ակներև են դառնում բարոյական ավանդական նորմերի անկումը, մարդկանց սպառողական հոգեբանությունը, կողմնորոշումը դեպի կեղծ մշակութային արժեքները, որը արդյունք է զանգվածային անկախ լրատվամիջոցների ակտիվ գործունեության: Ձևավորված սոցիալ-մշակութային պայմաններում դպրոցն է ի զորու ապահովելու աճող սերնդի բարոյական դաստիարակությունը՝ ձևավորելով մարդասիրության, հայրենասիրության, արժանապատվության բարձր հատկանիշներ: Նախ խոսենք բարոյական դաստիարակության մասին: Այն հասարակական գիտակցության ձև է, դաստիարակության ընդհանուր համակարգի ամենակարևոր բաղադրամասերից մեկը, հասարակական գիտակցության այն ոլորտներից, որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառնություն է կատարում: Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշումը աշխարհի հանդեպ: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

գԲարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:

գ Արդարամտությամբ. այս վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատումը:

գԳեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ: գՀանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ: Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ: Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքում: Բարոյական զարգացմանը նպաստում են անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը: Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլև նրա կարևոր գործառնությունն է, հասարակությանը այնպիսի մարդու հավելումը, որը մշտապես կկատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու: Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը առաքինի է, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը յուրահատուկ են և օրինակելի: Բարոյական զարգացումից զուրկ մարդը հասարակության համար անտանելի բեռ է: Մեր՝ ուսուցիչներիս խնդիրն է դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի համար մշտական սովորույթ, նրա բնավորության կայուն գիծը, որպեսզի նա միշտ կատարի դրական արարքներ և դրա հիման վրա ձևավորի վարքի դրական մշակույթ: Հեգելը գրում էր. ,Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, դրանով դեռևս առաքինի չէ: Նա առաքինի է այն դեպքում, երբ վարքագծի այդ եղանակը դառնում է նրա բնավորության մշտական գիծը:

Հմուտ մանկավարժը, օգտագործելով ուսումնական առարկաների բոլոր հնարավորությունները, սովորողին կարող է զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով: Նա կարող է կազմակերպել բարոյական թեմաներով զրույցներ, դասախոսություններ և բանավեճեր: Դեռահասները գնահատում են գիտակ ու խիստ, բայց արդարամիտ, բարեմիտ, տակտով օժտված ուսուցիչներին, որոնք կարողանում են

հետաքրքիր ու հասկանալի ձևով բացատրել նյութը, ընտրել աշխատանքի ճիշտ տեմպ, նրանում ներգրավել աշակերտներին և այն առավել չափով արդյունավետ դարձնել բոլորի և յուրաքանչյուրի համար:

Դեռահասների կյանքում մեծ տեղ են գրավում դպրոցը և ուսուցումը: Սակայն տարբեր երեխաների համար դրանց նշանակությունը նույնը չէ, թեև բոլորն էլ գիտակցում են ուսման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Շատերի համար դպրոցը ավելի գրավիչ է դառնում, քանի որ այնտեղ նրանք հասակակիցների հետ լայնորեն շփվելու հնարավորություն ունեն: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. ,Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևիցե: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային

նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից, աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է: Երեխաների արժեքների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի գեղագիտական դաստիարակությունը: Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը: Հանրության մեջ կա այն թյուր կարծիքը, թե հանրակրթական դպրոցում գեղագիտական դաստիարակության խնդիրը պետք է իրականացնել միայն արվեստի կամ հումանիտար ցիկլի ուսումնական առարկաների միջոցով: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է

անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: ,Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ դեռահասների բարոյական արժեքների ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների, փիլիսոփաների, հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին, ով իր աշխատություններով նպաստում էր կրթության առաջադեմ շարժմանը, համոզված էր, որ լավագույն կրթությանը հասնում են կրթության միջոցով. ,Ես հավատում եմ ,որ կրթությունը, հետևաբար, ապրելակերպ է և ոչ թե ապագա ապրելու նախապատրաստություն/Իմ մանկավարժական քույր-1897թ/: Դեռևս Սոկրատեսն էր իր սաներին սովորեցնում տրամաբանորեն և վերլուծելով մտածել, սակայն առաջին անգամ տեսականորեն այն մշակել է Ջ.Դյուին: Իսկ ըստ ռուս հայտնի հոգեբան Ս.Յ. Ռուբինշտեյնի, մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով:

Լ.Ս. Վիգոտսկին էլ ձևակերպել է մի օրենք , որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար: Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները, փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ , ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված, քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում, թե ինչպե՞ս կիրառվի կամ

օգտագործվի այդ գործիքը, արդյո՞ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ , յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում:

,Արժեհամակարգե հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու ,արժեհամակարգե հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով

բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն

ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»[1]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը մի ջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի

[1] Տես՝ Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 22 էջ:

արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝

ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող բոլոր առարկաները, այդ թվում և կենսաբանությունը: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ցանկացած առարկայի դասավանդումը դուրս է գալիս սոսկ գիտելիքներ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել::

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման

ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»[2]:

Բնապահպանական կրթության բոլոր աշխատանքները իրականացվում են երկու ուղղություններով `դասարանում և առօրյա կյանքում: Դասարանում երեխաների կողմից ստացված գիտելիքները, հմտությունները և ունակություններն ամրագրվում են ամենօրյա կյանքում:[3]

Առաջադեմ դիդակտիկ սկզբունքների հիման վրա և դպրոցական տարիքի երեխաների շահերի և ունակությունների վերլուծության հիման վրա գիտնականները մշակել են բնապահպանական կրթության տարբեր ձևեր:

Նրանք կարող են դասակարգվել.

ա) զանգվածային

բ) խմբային

գ) անհատական:

Զանգվածային ձևերը ներառում են մանկատների աշխատանքը շենքի բարեկարգման և այգեգործության և դպրոցական, զանգվածային բնապահպանական տարածքների, կոնֆերանսներ, շրջակա միջավայրի փառատոները, դերային խաղերը, տեղում աշխատանքը:

Խմբային - ֆիլմերի միջոցով ուսուցում, Էքսկուրսիա, արշավային շրջագայություններ շրջակա միջավայրի ուսումնասիրություն; բնապահպանական սեմինարներ և այլն:

Անհատական ձևերը ներառում են կենդանիների և բույսերի դիտարկումը. նկարելը, մոդելավորումը:

---

[2] Տես՝ Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.
[3] www.ecoline.ru – Բնապահպանական հիմնախնդիրներ,Ռուսաստան

Մտածեք ընտրված օրինակներ բնապահպանական կրթության նպատակներով երեխաների գործունեության տարբեր տեսակների օգտագործման հնարավոր տարբերակները:

Ժամանակակից հոգեբանական և մանկավարժական գիտություններում դիտարկումը դիտվում է տարբեր տեսանկյուններից: Ուսուցիչները դրա մասին խոսում են որպես բնական միջավայրի երեխաներին ծանոթանալու մեթոդ: Հոգեբանները առաջարկում են դիտարկումներ դիտարկել որպես մտավոր գործընթացներից մեկը, ինչպես նաև խոսակցությունների մասին խոսել որպես ճանաչողական գործունեության տեսակներից մեկը: Մեթոդ, դիտարկումը շրջակա իրականության օբյեկտների, երևույթների նպատակաուղղված, համակարգված, ավելի կամ պակաս երկարաժամկետ ընկալում է: Հավանությունը դիտվում է որպես դիտարկման հիմնական բաղադրիչ: Նպատակահարմար ընկալման համակարգված բնույթը մեզ թույլ է տալիս հետևել զարգացման երևույթին, նշել նրա որակական և քանակական փոփոխությունները: Դիտարկմանը ներգրավված ակտիվ մտածողությունը օգնում է առանձնացնել ամենակարևորը երկրորդականից, կարևորը պատահականից: [4]

Գիտնականները հայտնաբերել են մի շարք պահանջներ դպրոցական տարիքի երեխաների հետ դիտարկումների կազմակերպման և անցկացման համար.

.Դիտարկման նպատակների և խնդիրների պարզությունն ու առանձնահատկությունը: Միևնույն ժամանակ, խնդիրները պետք է ունենան կրթական բնույթ և խթանեն երեխաների մտավոր գործունեության զարգացումը:

. Յուրաքանչյուր դիտարկման համար պետք է ընտրել փոքր քանակությամբ տեղեկատվություն: Բնության օբյեկտների և երևույթների մասին գաղափարները ձևավորվում են դպրոցական տարիքի երեխաների հետ, աստիճանաբար, կրկնվող «հանդիպումների» ընթացքում (նրանցից մեկի համար ուսուցչի դիտարկման փուլերից օգտվելու գործընթացում): Յուրաքանչյուր հետագա դիտարկում պետք է հստակեցնի, ամրապնդի և ընդգծի, ընդլայնելով ստացված տեսակետները:

[4] Ա.Իսպիրյան:Մանկավարժական տեխնոլոգիաների մեկնաբանում, <<Մանկավարժություն>> 5, 2012:

. Դիտարկումների կազմակերպման մեջ պետք է մտածել համակարգի մասին, դրանց փոխկապակցումը, ինչը կապահովի երեխաների իրազեկված գործընթացների և երևույթների մասին իրազեկությունը:

. Դիտարկումը պետք է խթանի երեխաների շահերը, նրանց ճանաչողական գործունեությունը:

. Բնության օբյեկտների դիտարկումների արդյունքում երեխաների ձեռք բերած գիտելիքները պետք է ամրապնդվեն, զտված, ընդհանրացված և համակարգված լինեն երեխաների հետ շրջակա միջավայրի վրա աշխատելու այլ մեթոդների կիրառմամբ (բանավոր և գործնական):

Դիտարկումների ձևավորման գործընթացում երեխաները սովորում են տեսնել իրենց բոլոր բնավորությունների, հարստության և հատկությունների, փոխհարաբերությունների հարստությունը, շրջակա իրականության օբյեկտները և երևույթները: Դիտարկման զարգացումը նաև պայմաններից մեկն է, որ երեխաները կարողանան տիրապետել բնական աշխարհի մասին գիտելիքների համակարգին:

Դպրոցական ուսումնական հաստատությունների պրակտիկայում դիտարկումային մեթոդների օգտագործման հետ մեկտեղ, լայնորեն կիրառվում են ցուցադրական նյութերը: Տեսողական պատկերային նյութը օգնում է ամրապնդել և հստակեցնել ուղղակի դիտարկման ընթացքում ձեռք բերված երեխաների գաղափարները: Դրանով հնարավոր է երեխաների մոտ ձևավորել օբյեկտների, օբյեկտների և բնության երևույթների վերաբերյալ գաղափարներ, որոնք այս պահին (կամ տվյալ տարածքում) չեն կարող դիտարկվել: Տեսողական նյութերի օգտագործման գործընթացում երեխաները կարող են ծանոթանալ բնության երկարաձգվող երևույթներին (սեզոնային փոփոխություններին):

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի

ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»:[5]

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը կենսաբանության դասերին: Չ՞է,որ կենսաբանության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս ճանաչել բնությունը, կյանքը, արժևորել սեփական առողջությունը, գնահատել տեսակային բազմազանությունը, ձևավորել խնայողական վերաբերմունք բույսերի և կենդանիների նկատմամբ:[6]

[5] Տես՝ Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с.
[6] Տես՝ Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

Ուսուցման ձևերից են արտադասարանական աշխատանքները, միջոցառումները, էքսկուրսիաները և արշավների կազմակերպումը դեպի բնություն, հիդրոէլեկտրակայաններ, ջերմակայաններ, տարբեր արտադրական ձեռնարկություններ, ցուցահանդեսների և ակցիաների մասնակցություն և կազմակերպում:

Ուսումնական ճանապարհորդություններ

1. Այցելություն ՀՀ ազգային պարկեր՝ ,Սյանե ֆ ,Դիլիջան

Նպատակը – ծանոթանալ ազգային պարկի էկոհամակարգին, ուսումնասիրել

ընդգրկող տարածքը, կատարել հետազոտական աշխատանք՝ համեմատելով ,Սևանե և ,Դիլիջանե ազգային պարկերը, առանձնացման պատճառները:

2. ՀՀ պետական արգելոցներ՝ Խոսրովի, Էրեբունու

Նպատակը – հետազոտել պահպանվող տեսակները, ուսումնասիրել տարածքների կանոնադրությունը՝ համապատասխան որի կարգավորվում է պահպանվող տարածքների գործունեությունը:

3. Հողերի թանգարան

Նպատակը – մանրամասն ծանոթանալ Հայաստանի հողային ծածկույթին, հողերի տիպերին, իմանալ դրանց քիմիական և ֆիզիկական հատկությունները, տեղաբաշխման առանձնահատկությունները: Կարողանալ հասկանալ, թե էկոլոգիական ինչ խնդիրներ ունեն այսօր ՀՀ հողերը:

4. Ապարանի ջրամբար

Նպատակը – իմանալ, թե ջրօգտագործման որ ոլորտին է ծառայում, գետային է, թե լճային, արդյոք կենդանական աշխարհ կա ջրամբարում, և ինչպիսին է նրա էկոլոգիական վիճակը:

5. Բնապահպանության թանգարան

Նպատակը – այստեղ սովորողները կարող են ծանոթանալ Հայաստանի բուսական ու կենդանական աշխարհին, իմանալ անհետացած և անհետացման եզրին գտնվող տեսակների մասի, հասկանալ, թե ինչ միջոցառումներ պետք է ձեռնարկվեն վտանգը կանխելու համար:

6. Կենդանիների ապաստարաններ

Նպատակը – հասկանալ, կենդանիներին ապաստարանում պահելու պատճառը, իմանալ, թե արդյո՞ք նրանք վտանգ են ներկայացնում շրջապատում ազատ շրջելիս, կատարել հետազոտական աշխատանք՝ արդյո՞ք այդ կենդանիները երկրի մասշտաբով ուսումնասիրության առարկա են և արժանանում են համապատասխան վերաբերմունքի՝ որպես բնության տեսակ:

7. Այցելել հանքարդյունաբերական ընկերություններ ֆ հանքեր

Նպատակը – պարզել ՀՀ ընդերքի ռեսուրսների շահագործման աստիճանը, հասկանալ այդ ընկերությունները կարողանո՞ւմ են իրենց հասցրած վնասը փոխհատուցել և ի վերջո, դեռ ինչքա՞ն ժամանակ կարող ենք շահագործել այդ ռեսուրսներ: Արդյո՞ք մեր սերունդներին կայուն զարգացում կապահովվի:

8. ՀՀ սեյսմիկ կայան

Նպատակը – Հայաստանը գտնվում է սեյսմիկ անկայուն տեղամասում, ինչպես են ազդում մեր երկրի մայր ապարների վրա ընդերքաօգտագործման, տարբեր շինարարական աշխատանքները, Տարերային աղետների էկոլոգիական հետևանքները:

9. Հայաստանի հիդրոմետ կայան

Նպատակը – ջերմոցային էֆֆեկտը, կլիմայի գլոբալ փոփոխությունը և Հայաստանը: Ինչպես են ազդում կլիմայական փոփոխությունները մեր երկրի կլիմայի և եղանակային պայմանների վրա:

10. Թափոններ վերամշակող ընկերություն

Նպատակը – ծանոթանալ վերամշակման մեխանիզմին, գիտակցել, որ երկրորդային վերամշակումը շատ կարևոր է էկոլոգիական աղտոտումներից խուսափելու համար,

կատարել ստեղծական աշխատանք՝ առաջարկել սեփական մեխանիզմը այս կամ այն թափոնը վերամշակելու համար:

Էկոլոգիայի ուսուցման մեթոդաբանության մեջ, ինչպես և կենսաբանության ուսուցման մեթոդաբանության մեջ, դասարանային ուսուցման ձևը համարվում է որպես կրթական գործընթացի արտաքին դրսևորում: Կրթության ձևերը կարգավորում են ուսուցիչների և աշակերտների համատեղ գործունեությունը, որոշում են ուսանողների անհատական և կոլեկտիվ աշխատանքի, գործունեության, ճանաչողական գործունեության անկախության և ուսուցիչի ղեկավարության դերի հարաբերակցությունը:

Տվյալների մշակում ֆ վերլուծություն

Տեղին է երեխաների ուշադրությունը սևեռել առավել հետաքրքիր երևույթների վրա և հարցադրումներ անել պրոբլեմային բնույթի և հասկանալի խնդիրների մասին:

Դրանք երեխաներին կդրդեն դիտարկել ու գտնել ինքնուրույն պատասխաններ:

Էքսկուրսիաներն արշավներից տարբերվում են ավելի փոքր ծավալով՝ բնության գրկում լինելու տևողությամբ, մանկավարժական խնդիրների բովանդա կությամբ, գործունեության տեսակներով, պատրասվածության մակարդակով և հանդերձանքով:

Էքսկուրսիաների ընթացքում երեխաները կարող են բնական պայմաններում հետևել բնության առարկաներին և երևույթներին, սեզոնային փոփոխություններին, տեսնել, թե ինչպես է մարդը վերափոխում բնությունը՝ այն ծառայեցնելով իր նպատակներին:[7]

Էքսկուրսիայի ժամանակ երեխաները հնարավորություն ունեն տեսնելու բույսերը և կենդանիներն իրենց բնակության միջավայրում, պատկերացում ունենալ բնության մեջ գոյություն ունեցող փոխադարձ կապերի և միասնության վերաբերյալ: Դպրոցականների

[7] Կ.Դանիելյան,Լ.Սարգսյան,Տ.Սարգսյան,Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան:Համաշխարհային գործընթացը և Հայաստանը,Երևան 2013թ.

առօրյա կյանքում կարևոր դեր ունեն զբոսանքները: Այդ ընթացքում դաստիարակը երեխաներին ծանոթացնում է բնության այնպիսի երևույթների, ինչպիսիք պահանջում են համեմատաբար երկար ժամանակ (ձյան հալոցքը, բողբոջների հայտնվելը, խոտաբույսերի ծլարձակումը, պտուղների հասունացումը և այլն):

Այսպիսով, վերոհիշյալ միջոցառումների նպատակասլաց իրականացումը դպրոցականների առօրյա կյանքում էապես կնպաստի նրանց բնապահպանական դաստիարակությանը:

Խաղ 1: Երեխաներն այբբենական կարգով՝ ըստ հերթականության, թվարկում են բույսերը՝ Ա-ից մինչև Ք: Եթե որևէ մեկը չի հիշում, նրան կարող են օգնել մյուսները: Կարելի է խաղը զարգացնել, փորձել այլ բույսեր անվանել համապատասխան տառով՝ պահպանելով այբբենական կարգը:

Իսկ որևէ տառով բույս չգտնելու դեպքում օգնության է հասնում ուսուցիչը: Նա կարող է նաև երեխաներին հանձնարարել՝ տանը մտածել և գտնել այդ տառով որևէ բույսի անուն՝ հաջորդ պարապմունքին խաղը շարունակելու համար:

Խաղն ավարտելուց հետո երեխաներին առաջադրվում են հարցեր, ,Արդյո՞ք հետաքրքիր էր բույսերի մասին նոր բան իմանալը, ,Նոր բան իմացա՞ք, թե՞ ոչ է, ,Ուզու՞մ եք այդ նորությունների մասին պատմել ձեր ընկերներինե: Հարցադրումները պետք է միտված լինեն՝ երեխաների ուշադրությունը հրավիրելու բույսերի տարբեր առանձնահատկությունների, կիրառության ոլորտների և այլ տարբերակիչ հատկանիշների ճանաչմանը, ամենակարևորը՝ ձևավորեն սեր, խնայողական վերաբերմունք, արժևորել բույսերը որպես սննդի, թթվածնի աղբյուր, որպես դեղամիջոց: Հարցերը պետք է կազմել այնպես, որ հետո պարապմունքի երկրորդ մասում բույսերի խմբավորման խաղի ժամանակ երեխաների համար հեշտ լինի բույսերն ըստ տարբերակիչ հատկանիշների դասակարգելը:

Խաղ 2. Հաջորդ պարապմունքի ժամանակ կարող են հնչել այսպիսի հարցեր. ,Ի՞նչ գույնի ծաղիկ ունի տվյալ բույսը, այն խոտաբու՞յս է, ծա՞ռ, թե՞ թուփե, ,Ինչպիսի՞ն են տերևները, ,Ինչո՞վ է այն օգտակար. դեղաբու՞յս է, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ հիվանդության դեպքում օգտակար կլինի դրանով թեյ խմելը, ,Մշակովի՞ է, թե վայրիե:

Մինչ խմբավորման խաղին անցնելը ցանկալի կլիներ երեխաներին պատմել, որ գիտնականները աշխարհի բոլոր կենսաբանական օրգանիզմները խմբավորել են տարբեր կարգաբանական խմբերում. հաշվի են առնվել դրանց կառուցվածքը, ծագումը, տեսակը և այլն: Այնուհետև երեխաներին կարելի է առաջարկել բույսերը խմբավորել ըստ իրենց նկատած տարբերակիչ հատկանիշների: Հասկանալի բացատրելու համար պետք է բերել մի քանի օրինակ, ասենք՝ ծիրան, հաղարջ, ռեհան, դդում, ձմերուկ, և բաժանումը կատարել ըստ Ծառ, Թուփ, Խոտաբույս և Բանջարանոցային բույսեր խորագրերի: Երեխաների ուժերով կազմված խմբավորումներն ըստ նկարների անհրաժեշտ է ցուցադրել: Այդ շարքերը կարելի է լրացնել այլ խմբավորումներով: Հարկավոր է երեխաների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ նույն բույսը կարող է հայտնվել տարբեր խմբերում:

Խաղ 3. Դիպված՝ Բնության գրկում: Ուսուցիչները երեխաների մոտ բույսերի նկատմամբ հոգատարություն սերմանելու նպատակով կարող են պատմել հետաքրքրաշարժ և ուսուցողական պատմություններ, առաջարկելով երեխաներին մեկնաբանել դրանք: Օրինակ՝

Թեմա ,Երեխաներին ծանոթացնել դաշտային ծաղիկների բազմազանությանը, նրանց օգտակարությանը: Ճանապարհի երկու կողմերում կանաչ մարգագետին էր՝ ծածկված վառվռուն ծաղիկներով՝ կակաչներով, երիցուկներով, զանգակներով: Ճամփեզրին մի մեքենա էր կանգնած, իսկ ուղևորները՝ հայրը, մայրը, երկու երեխաները, անխնա, արմատներով պոկոտում էին ծաղիկները: Անցորդներից մեկը չկարողանալով զսպել իրեն, ասաց, որ չի կարելի այդպես արմատներով պոկոտել ծաղիկները, չէ՞ որ եկող տարի այդտեղ արդեն ոչ մի ծաղիկ չի աճի: Մայրը պատասխանեց. Ի՞նչ անենք՝ չի աճի, երեխաներս ուրախանում ենե, և ավելի անխնա շարունակեցին իրենց սև գործը:

Վերը նշված օրինակի միջոցով կարել է երեխաների մոտ ձևավորել պատկերացում բույսերի մասին, նրանց ճիշտ խնամքի, օգտակարության և այլնի մասին:

Գործնականում էկոլոգիական կրթության բոլոր ծրագրերը, մեթոդական խորհուրդները, ցուցումները օգնում են երեխաներին տնային և դաշտային բույսերի, ծաղիկների, տարբեր տեսակների հետ ծանոթացմանը:

Դպրոցականների դաստիարակությունը առօրյա կյանքում կարող է կազմակերպվել կանխամտածված, պլանավորված ձևով և իրականացվել ըստ իրավիճակների: Առօրյա կրթադաստիարակչական գործընթացն արդյունավետ է այն դեպքում, եթե առկա են երեխաների հետ մեծահասակի փոխազդեցության զանազան ձևեր, և շփումը կրում է գործնական և անձնավորված բնույթ:

Բազմաթիվ մանկական առաջատար հոգեբաններ անձի կայացման ու զարգացման օնտոգենեզում մեծ նշանակություն են տալիս շփմանը մարդկանց և բնության հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ոչ միայն ազգային արժեքային համակարգի, այլև համամարդկային արժեքային համակարգի ձևավորման մասին կենսաբանության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ կենսաբանություն առարկան:

Դպրոցում սովորողները կենսաբանություն առարկայի շրջանակներում ծանոթանում են կենդանի օրգանիզմների, այդ թվում մարդու կառուցվածքին, օրգանիզմում ընթացող գործառույթներին, օրգանիզմի և առանձին օրգան համակարգերի հիգիենային ու խնամքին, առողջ ապրելակերպին: Սովորում են զարգացնել և պահպանել հետաքրքրասիրությունը, հիացմունքը և հարգանքը բնության և կենդանի աշխարհի հանդեպ;

- ձևավորել և ամրապնդել առողջ ապրելակերպին միտված գիտակցված վարքագիծ և սովորույթներ;
- զարգացնել պատասխանատու քաղաքացու վերաբերմունք և մտադրվածություն՝ նպաստել անձնական և հանրային առողջությանը:
- զարգացնել և պահպանել հետաքրքրասիրությունը, հիացմունքը և հարգանքը բնության և կենդանի աշխարհի հանդեպ;
- ձևավորել և ամրապնդել առողջ ապրելակերպին միտված գիտակցված վարքագիծ և սովորույթներ;

- զարգացնել պատասխանատու քաղաքացու վերաբերմունք և մտադրվածություն՝ նպաստել անձնական և հանրային առողջությանը:
- Այս ամենը ճիշտ կազմակերպելու դեպքում աշակերտները կսովորեն սիրել կյանքը, արժևորել սեփական ու հարազատների առողջությունը, հոգատար վերաբերմունք ցույց տալ բնության նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առարկայական չափորոշիչներ. https://escs.am/am/search

2. Հանրակրթության պետական չափորոշիչ. https://www.arlis.am/documentview 3.

3. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ.:

4. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության ,արդիականացումըե համաշխարհային գլոբալացման համատեքստում, ,Կրթությունը XXI դարումե գիտակրթական հանդես, N1, էջ 50-83, Երևան, 2014 թ.:

5. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը,

6. ,Մանկավարժությունե գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15:

7. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

8. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.:

9. Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:

10. Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986

11. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978.

12. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 197